«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը»

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Աննիկ Ղազարյան

Ուսումնական հաստատություն՝ «Վերին Պտղնիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ 2023

Բովանդակություն

1. Տիտղոսաթերթ ----------1

2.Բովանդակություն ----------2

3.Ներածություն----------3-4

4.Մաս 1 «Առակներն ու նրանց նպատակը»:----------5-10

5.Մաս 2 «Նոր կտակարանյան առակներ»:----------11-15

6.Եզրակացություն----------16-17

7. Առաջարկություն----------17

8.Օգտագործված գեղագիտության ցանկ----------18

Ներածություն

-«Չկա ավելի բարձր արվեստ, քան դաստիարակելու արվեստը: Իմաստուն դաստիարակը կերտում է մի կերպար, որին նայելով ցնծում են թե՛ մարդիկ և թե՛ Աստված»:

Հովհաննես Ոսկեբերան

«Խրատի՛ր որդուդ, որպեսզի այդպես բարի հույս լինի քեզ համար…» [1]

Աստվածաշնչյան այս գեղեցիկ ոսկեղենով եմ ցանկանում սկսել իմ հետազոտական աշխատանքը, որովհետև եթե պետք է երբևէ դիմել խրատներին,ապա որպես կյանքի երթևեկության կանոնների գիրք պետք է բացել Աստվածաշունչը, որն իմաստության արմատն է ու լույսի ակունքը, և առաջնորդվել նրա աստվածահաղորդ իմաստությամբ:

Դաստիարակությունը բոլոր սուրբ գործերից ամենասուրբն է «Ինչ ցանես, այն էլ կհնձես»

Երեխաների դաստիարակության և կրթության հարցում միայն աշխարհիկ կրթությամբ լավագույն արդյունքի հասնելն անիրական է: Աշխարհիկ կրթությունը պետք է դասավանդվի քրիստոնեական տեսանկյունից և երեխան դպրոցում պետք է ստանա աստվածաշնչյան դաստիարակություն, որպեսզի իր հասուն կյանքը կառուցի ճիշտ, «Ժայռի» օրինակով:

Ինչպես ասել է Ս. Իոանն Կրոնշտադտցին «Կրթությունն անբաժանելի է դաստիարակությունից»:

Աստվածաշնչյան առակները կարող են այդ հարցում ամենակատարյալ միջոցը լինել:

Ի՞նչ է առակը: - Առակ նշանակում է առ ակն՝ այսինքն աչքի առաջ: Իմաստասիրական, բարոյական, կրթող բնույթ ունեցող գրական ճյուղ, որն ունի հատուկ կառուցվածք և նպատակ ունի մարդուն ցույց տալու ճշմարիտ ճանապարհը: Առակի հերոսը մարդն է, ում կյանքի, բնավորության անմարդկային և բացասական, լավ կամ դրական կողմերը ծաղրվում, բարձրացվում կամ ցուցադրվում են այլաբանորեն: Ուստի պատահական չէ որ Աստվածաշունչը հագեցած է առակներով ու այլաբանական պատմություններով:

Առակների նյութը հիմնականում հասարակական և կենցաղային խնդիրներն են, դասակարգերի, դասեր ու խավերի, անհատների փոխհարաբերության հարցերը:

Առակագիրները շոշափում են տվյալ ժամանակների խնդիրները՝ սոցիալ- պատմական իրադրության պարզաբանման համար: Առակներում արծարծվում են հասարակական շերտավորումը և սոցիալական պայքարի առկայությունը:

Առակը խրատական բնույթի փոքրածավալ գեղարվեստական ստեղծագործություն է: Այն սկզբնավորվել է ժողովրդական բանահյուսության մեջ և ապա մշակվել առակագիրների կողմից:

Երեխաներն ամենաանկաշառ հոգևոր աչքերն ու արդարամիտ հոգին ունեն, նրանք դեռևս չեն աղտոտվել և չպետք է թույլ տանք, որ ներքաշվեն այսօրվա գլոբալիստական բարքերի մեջ: Պետք է օրինակ լինենք մեր աշակերտների, և ընդհանրապես ,մեր շրջապատի մարդամարդու էակների համար:

Աստվածաշնչյան առակներն ուսուցման իրենց առանձնահատուկ տեղն ու դերն ունեն մատաղ սերնդի դաստիարակության գործում: Առակն ընդհանրապես օգնում է երեխայի մոտ ձևավորել մտածողություն, երևակայություն, բարոյական ընկալումների զարգացման առանձնահատկություններ:

Հոգևոր դաստիարակությունը փոխանցում է բարոյական արժեքներ, իսկ դպրոցի և մանկավարժի գերխնդիրն է այդ արժեքները սերմանել երեխաների մեջ և հետամուտ լինել, որ դրանք յուրացվեն աշակերտների կողմից:

Աստվածաշունչն ասում է. «Երեխայից խրատը հետ մի պահիր»: Առ. 23. 13

[1] Առակ. 19:18),

Սովորողի համակողմանի զարգացման հիմքը արժեքային համակարգի ձևավորումն է՝ ազգային և համամարդկային արժեքների գիտակցումը, իսկ այդ արժեքներն /նյութական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական, բարոյական, ճանաչողական և այլն/ ընկած են մարդասիրական կրթության հիմքում:

Ինչու՞ եմ իմ հետազոտական աշխատանքի համար ընտրել հենց այս թեման: պատասխանեմ . ՀԵՊ առարկայի դասավանդման ժամերին / հատկապես հինգերորդ դասարանում/ հասկացել եմ, որ երեխաները /սովորողները/ պայծառանում են, մեծ սիրով մասնակցում դասին, ակտիվ են, իրենց «սահմանափակ» բառապաշարով ֆիզարկումներն ավելի հասուն են դարձնում:Դա պատահական չէ, քանզի Աստվածաշնչում տեղ գտած առակներն ունեն իրենց ուրույն, պարզ մեկնաբանությունները և դաստիարակչական նշանակությունը:

Մաս 1 – Առակներն ու նրանց նպատակը

Մահկանացուներս շատ բաներ սովորում ենք մեր շրջապատում ունեցած օրինակներով: Առակը ծառայում է դրան:

Եսայու մարգարեությունում ասվում է. «Անդադար կլսեն,բայց չեն հասկանա, շարունակ կնայեն, բայց չեն տեսնի»: Աստծո ներշնչմամբ գրված այս խոսքերը սաղմոսերգուն ասել է աստծո Որդու՝ Հիսուսի ծնվելուց դարեր առաջ: Ուրեմն Իր Որդու երկիր գալուց դեռ հարյուրավոր տարիներ առաջ Աստված որոշել էր, որ Նա ուսուցանելու է առակների միջոցով: Ուրեմն կարելի է ենթադրել, որ Աստված գնահատում է ուսուցման այս մեթոդը:

Ամեն մի ժողովուրդ իր բնույթին ու ազգային առանձնահատկություններին հատուկ ունի առակների մշակված հավաքածուներ, ունի իր առակագիրները, ովքեր իրենց ներկայացրած առակների մեջ ներդնում ու ֆիքսադատում են ոչ միայն մարդկային գծերը, այլ նաև խտացնում ազգային գենոֆոնդին բնորոշ առանձնահատկությունները: Հայ առակագիրներ են Վարդան Այգեկցին, Մխիթար Գոշը, Հովհաննես Երզնկացին,Վարազդատ Բագրևանդցին և այլոք: Հայկական առակներն այնքան իմաստնալից են եղել, որ մեծ տարածում են ունեցել և թարգմանվել տարբեր լեզուներով: Այս ժանրը առավել ուսումնասիրել է Մխիթար Գոշը՝ զարգացնելով առակների սրամիտ տեսակները: Գոշը առակները բաժանել է մի քանի տեսակի 1.առասպելական, 2.բարոյական, 3.ստեղծական:Դրանք հիմնականում տարբերվում են իրենց գլխավոր հերոսներով:Առասպելականի հերոսները, կենդանիներն են, բարոյականինը՝ բույսերն իրենց հատուկ գծերով, իսկ ստեղծականինը՝ մարդիկ իրենք են: Առակը հիմնականում երկու մասից է բաղկացած. այուժեն և իմաստի բացատրությունը՝ նպատակը, որն էլ սկսվում է «Առակս զինչ կցուցանե» խոսքերով: Առակների միջոցով մենք նաև ծանոթանում ենք տվյալ ժամանակաշրջանի սովորույթներին, բարքերին և պատկերացում ենք կազմում կենցաղի, կյանքի մասին:

Հնում պատմիչներն ու իմաստունները գրեթե միշտ խոսել են առակների լեզվով:Առակը ժողովրդին վերաբերվող ժողովրդի խոսքն է հենց իր կողմից, որը նպատակ ունի դաստիարակելու մարդկանց: Մեզ հայտնի առակագիրներ են նաև Եզոպոսը, Իվան Կռիլովը,Լաֆոնտենը, Սողոմոնը և այլն, սակայն մեզ համար առավել կարևոր են աստվածաշնչյան առակները,որոնք չեն գրել պատահական մարդիկ, այլ Աստծո ընտրյալները, ովքեր առակների միջոցով մեզ են փոխանցում Արարչի կամքը:

Աստվածաշունչը լի է առակներով, որոնք մեզ ներկայացնում են տարբեր իմաստուններ, մարգարեներ ու մեր Տեր Հիսուս Քրիստոս,որ ամբողջ ժամանակ խոսում էր առակներով՝ հաճախ դրանց մեկնությունները թողնելով լսողներին: Նրա առակներն առասպելական կամ հեքիաթային պատմություններ չէին, դրանցում չկային երգող կենդանիներ, խոսող թռչուններ, թռչող գազաններ: Բացառիկ ու խիստ խորն են Քրիստոսի պատմած առակները, դրանք վերցված են իրական կյանքից, առօրյա կենցաղից, որոնք տարբեր դարերում, տարբեր մարդիկ մեկնել ու բացատրել են տարբեր կերպ, բայց դրանց նպատակը մեկն է՝ մարդու փրկությունը:

Առակի միջոցով ներկայացնում էր Աստծո խոսքը, բացատրում էր Իր ասածի իմաստը և արտահայտված խոսքը շատ ավելի տպավորիչ էր դարձնում լսողների համար:

Հիսուսի ուսուցման այս պարզ ոճը հակադրվում էր Իր ժամանակի հրեա գիտնականների բարդ լեզվին:

Հիսուսն Իր առակներով մարդկանց սովորեցնում էր, որ կարևորը մարդու ներքինն է, ոչ թե՝ արտաքինը: Նա ասում էր, որ ամեն ներս գնացող բան չի կեղտոտում մարդուն, այլ միայն դուրս եկողը:

Հին կտակարանում հայտնի են հատկապես Սողոմոնի առակները, Սիրաքի իմաստության գիրքը և տարբեր այլ առակներ, որ տեղ են գտել այլ գրքերում, բայց առավել առակներով ճոխ ու հարուստ է Հիսուսի կյանքի պատմությունը: Համատես չորս ավետարաններում կան բազմաթիվ առակներ, որոնցից սակայն քչերն են, որ համարվում են «միակ ավանդություն»՝ այսինքն սոսկ մեկ ավետարանին հատուկ, օրինակ՝ «Որոմների առակը» Մատթեոսի ավետարանում, «Աղքատ Ղազարոսի» առակը Ղուկասի ավետարանում:[2]

Հիսուս շատ էր սիրում մանուկներին, հաճախ գրկում էր նրանց նստեցնում Իր ծնկներին և նախատում նրանց, ովքեր խանգարում էին առնչվել երեխաներին. Երեխաները համարվում են առավելապես անմեղության լույսի կրողը: Նրանք լույս աշխարհ են գալիս մաքուր, խոնարհ, պարզ, որպես երկնքի արքայության ժառանգակիցներ: Սակայն նրանց քրիստոնեա - բարոյական կերպարի ձևավորումը կյանքի ընթացքում սերտ կապված է ծնողների ընկալումների, շրջապատից ստացած հաղորդիչների և ընդհանուր դաստիարակության հետ:

Հոգևոր դաստիարակության նպատակը հիմնականում մեկն է, սակայն տարբեր են լինում հաղթահարվող խնդիրներն ու մեթոդները, որովհետև եթե կրթությունը նպատակաուղղված է մարդու համակողմանի և ներդաշնակ զարգացմանը՝ նրան առաջ մղելով կրթական և գիտական ասպարեզում, ապա հոգևոր կրթությունը մարդուն դարձնում է Քրիստոսանման, նրա մեջ սերմանում հավիտենականության, լուսավորի, բարու և արդարի ձգտումը:

[2] «Նոր կտակարանի ներածություն» էջ 177 Տեր Սիփան քահանա

«Թո՛ւյլ տվեք այդ մանուկներին և մի՛ արգելեք, որ նրանք ինձ մոտ գան, որովհետև երկնքի արքայությունը այդպիսիններինն է»[3]: Մատթեոսի ավետարանում ահա այսպես է Հիսուս Քրիստոս պատասխանում առաքյալներին, երբ նրանք չեն թողնում երեխաներին մոտենալ վարդապետին՝ մտածելով, թե հոգնություն կպատճառեն: Բնական է, որ Քրիստոսի հանդիմանությունը ոչ միայն առաքյալներին է վերաբերում, այլև համայն մարդկությանը՝ հատկապես ծնողներին:

Մայր Թերեզան ասում է, որ պետք է ուշադիր լինել այն խոսքերի նկատմամբ, որոնք ասվում են երեխաներին, որովհետև դրանք դարձնում են նրանց հենց այդպիսին, ավելացնում է նաև «Երեխաներին դաստիարակեք նրանց համար հրաշալի օրինակ լինելով:Երեխաները չեն սիրում հրահանգներ ու թելադրություններ, նրանք ուզում են տեսնել ձեր արարքները, ոչ թե լսել ձեր խոսքերը»:

Ծնողները իրենց երեխաների հոգևոր կրթությունը չպետք է թողնեն լոկ ուսուցիչների ձեռքերում, նրանք իրենք անմիջական մասնակիցն են դրան՝ իրենց ներկայությամբ և օրինակով: Նրանք պետք է ժամանակ հատկացնեն իրենց երեխաներին և նստելով նրանց կողքին,բացել Աստվածաշունչն ու կարդալ, մեկնաբանել ու բացատրել առակները ու դրանց խորդուբորդ թվացող իմաստները,մի կողմ դնել եսասիրությունն ու երեխաներին սովորեցնել սիրել Աստծուն ամեն ինչից առավել, այդպես նրանք իրենց երեխաներին կվարժեցնեն նաև ծնողասիրության ու կմոտեցնեն մնացած բոլոր առաքինություններին: Խրատ չսիրողը դևերի հետ է ընկերակցում: Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է. «Անխրատությունը բոլոր ախտերի մայրն է»: Իսկ ընտանիքի դաստիարակության հետ կապվում են նաև աշխարի վերջին վերաբերվող հայտնությունների էությունը, այն որ եղբայրը կատի եղբորը, որդին կսպանի ծնողին, մայր ու մանուկ կուրանան իրար և այլն:[4]Որպեսզի մեր որդիները չարժանան այս ամենին, նրանց պետք է խրատել և կապել Աստվածաշնչի լույսին:

«Թող ձեր երեխաները գրկեն ավետարանը ու սովորեն նրա դասերը, եղբորը սիրեն, ընկերոջը սիրեն և լինեն մարդասեր»: Գրիգոր Տաթևացի

Աստվածաշնչային ճշմարտություններն ընկալելու և կիրառելի դարձնելու համար պետք է օգտվել մանկական Աստվածաշնչից,վարժեցնել այն ընթերցելուն, դրան կօգնեն հատկապես առակները, որոնք շատ հետաքրքիր ու խորհրդավոր ձևով են ներկայացվում՝ շարժելով հետաքրքրասիրություն: Որպեսզի երեխաներն ավելի լավ ընկալեն առակների իմաստը, կարելի է ֆիլմարկում կազմակերպել և նրանցից հարցնել իրենց կարծիքները: Այդպիսով նրանց պատասխաններից կարող ենք նաև հասկանալ երեխայի մոտ զարգացող հոգևոր խնդիրները և դրանք ֆիքսելով՝աշխատել դրանց վրա՝ նրանց անմեղությունները վերածելով երբեք չխամրող մարգարիտների: Մատչելի և առավել հետաքրքիր դարձնելու համար առակների ուսուցումը նույնիսկ կարելի է, օրինակ, Քրիստոսի կատարած հրաշքները, բժշկությունները, պատմող առակները ներկայացնել հեքիաթանման կամ վերածել դերախաղի, որը երեխաները շատ մեծ սիրով են անում, նույնիսկ սցենարները իրենք են պատրաստում՝ գործի դնելով ստեղծագործական իրենց ողջ ներուժը:

Երեխան նման է նորատունկի,նրա պտղատու լինելու համար հարկավոր է հետևողական լինել, ոչ միայն այն հողի մեջ դնել, այլև՝ ջրել, խնամել, պատվաստել ու տալ անհրաժեշտ «վիտամինները» կյանքի դժվարություններին, միջատներին, հողմերին, երաշտին դիմակայելու համար:Ուստի մանուկ հասակից նրան պետք է հաղորդակից դարձնել պատարագին և եկեղեցուն, քրիստոնեական և ազգային արժեքներին,սովորեցնել գնահատել ոչ միայն ընտանիքը, այլ նաև ծննդավայրը, հայրենիքն ու այն արժեքները, որոնք իրենց փոխանցել են նախնիները,որովհետև եթե երեխայի աշխարհայացքում չի պահպանվում ազգայինը, ապա համամարդկայինը հեղհեղուկ ու սնամեջ գաղափարախոսություն է դառնում:

«Այսպիսով, նախնիների գովաբանումը, նշանակում է նաև մեզ գովաբանել, իսկ եթե ոչ, ապա մեզ գովաբանելը ոչ մի նշանակություն չունի, նույնիսկ ավելի դատապարտություն է հարուցում»[5]:

Երեխայի ազգային, քրիստոնեական կերպարի ձևավորման համար մեծ նշանակություն ունի ծնողների, ուսուցիչների և հոգևորականների համաջանք աշխատանքը:Իսկ այդ սնունդը, հենց ուղիղ իմաստով երեխային մատուցելը խրթին ու տաղտկալի, նաև ոչ ընկալելի երևույթ կարող է լինել, բայց երբ իմաստը նույնն ես պահում, բայց գտնում ես առակի խոսքերի ու սյուժեի գեղեցիկ, պարզ ու վսեմացնող շարադրանք, ապա դա ոչ միայն բարոյապես է կրթում երեխային, այլ նաև հարստացնում է նրա զգացմունքային աշխարհը: Այս պարագայում կարելի է օգտվել հենց առակներից, հատկապես՝ աստվածաշնչյան:

[3] Մատթ. 19:14

Աստվածաշնչյան առակները բազմիմաստ են ու տարբեր, կարող են վերաբերվել ցանկացած թեմայի ու ցանկացած տեսակի մարդու: Մինչ տերունական առակներին հասնելը ես կփորձեմ մի փոքր ներկայացնել Հին կտակարանի առակներից, որ նույնքան գեղեցկագիր շարադրվածք ու խորը իմաստ ունեն: Ինչպես Նոր կտակարանն է լրացնում Հին կտակարանին, այնպես էլ Նոր կտակարանի առակները, գալիս են լրացնելու և հաստատելու այն ամբողջ փիլիսոփայությունն ու նպատակը, ինչը որ դրված է Հին կտակարանում: Հին կտակարանն ունի իմաստասիրական համարվող գրքերի բույլ, որոնք բացի պատմություններից և մարագարեական խոսքերից ունեն հատուկ կրթող բնույթ և իրենց պարզ ու սքանչելի կերտվածքով ավելի ընդունելի ու հոգեհարազատ են ընթերցողներին:

Այդ գրքերից են Սողոմոնի առակները, Սիրաքի իմաստությունը, Հոբի գիրքը, Ժողովողը և այլն: Եթե հիշենք հայոց առաջին թարգմանությունը, որ Մեսրոպ Մաշտոցն արեց իր աշակերտների հետ, ապա կտեսնենք, որ հայոց այդ մեծ և իմաստուն մարդը, Աստվածաշունչը չի թարգմանել հենց սկզբից կամ Նոր կտակարանից, այլ վերցրել է Աստվածաշնչի էպիկենտրոն համարվող գրքից՝ «Առակաց» գրքից, որտեղ դրված է կյանքի ողջ իմաստությունը. «Ճանաչել զիմաստություն և զխրատ,իմանալ զբանս հանճարոյ»:[6]

Թեև ճշանավոր հայագետ Ֆ. Կոնիբերը նշում է. «Թերևս հասարակ պատահմունք է այն, որ Մեսրոպը, թողնելով Աստվածաշնչի ավելի կարևոր գրքերը, իր գործն սկսել է նվազ կարևորից»՝ համարելով, որ սկզբում Ասորիքի մեջ Մաշտոցը կարողացել է ձեռք բերել միայն այնպիսի թարգմանություն, որն սկսվում է հենց առակներից, սակայն հայ վերլուծաբանները կարծում են, որ Մաշտոցին մտահոգել է այն հյութը, որ պիտի փոխանցի իր աշակերտներին և կարևոր նշանակություն ունենա հասարակ ժողովրդի համար, քանի որ Սողոմոն արքայի աստվածաշնչյան առակների մեջ կան ոչ միայն սեր հանճարի ու իմաստության վերաբերյալ, այլ դրանք վերաբերվում են նաև մարդկային և ընտանեկան հարաբերություններին, այնտեղ կա և՛ ծնողին սիրելու, և՛ երկիրը պաշտելու, և՛ Աստծուն հավատարիմ մնալու, և՛ առաքինության ձգտելու ամեն տեսակի խրատ: Մաշտոցը ընտրել է հենց առակները, որովհետև իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է, ինչպես ասում է առակագիրը[7] և հորդորում է միշտ աչքի առաջ ունենալ այդ խրատները[8] :

Եթե մեծերը խրատ չտան երեխաներին, ապա իրենց ծերության ժամանակ մրրիկ պիտի հնձեն ու իրենց աչքերով պիտի տեսնեն, թե ինչպես է իրենց երեխան արհամարհում իրենց ու անարգում իրենց պատիվը, դրա համար առակներով խրատում է նաև ծնողներին՝ ասելով. «Գավազանդ մի խնայիր:Գավազանը խնայողն ատում է իր որդուն»[9]: Սողոմոնի առակները հիմնականում սյուժե չունեն, բայց ունեն իմաստասիրական չքնաղ բնույթ: Չի կարող իմաստության ձգտող հոգին անտարբեր լինել այդ մարդկության կյանքին վերաբերվող գոհարների նկատմամբ: Դրանցից մի քանիսը կներկայացնեմ.

1.Կործանման առջևից հպարտությունն է գնում, իսկ անկման առջևից՝ ամբարտավան հոգին: Առակաց 16:18

2.Ուշ բարկացող մարդը հզորից լավ է ու իր հոգին զսպողը՝ քաղաք գրավողից: Առակաց 16;32

3.Գինեմոլն ու որկրամոլը աղքատության են հասնելու, իսկ շատ քնելը քրձեր է հագցնում: Առակաց 23:21

4.Մրջյունները, որ մի զորավոր ժողովուրդ չեն, բայց իրենց ուտելիքն ամառվանից են պատրաստում: Առակաց 30:25

[7]Առակաց 9:10

[8]Առակաց 4:12

[9] Առակաց 13:24

Եվ այսպես անդադար կարող ենք թվել աստվածաշնչյան այս գոհարները և խորհել մեր մեջ, թե դրանցից որոնք ենք տվել երեխաներին կամ ինչու՞ մինչև հիմա խնայել ենք դրանք: Հին կտակարանյան առակներից են վերցված նաև հայտնի թևավոր խոսքեր, որոնք մենք պարբերաբար գործածում ենք խոսակցական լեզվի մեջ՝ առանց իմանալու դրանց ծննդավայրը, որն Աստվածաշունչն է, չնայած Աստվածաշունչը ամբողջովին թևավոր խոսքերի շտեմարան է:

Այդ խոսքերից ևս մի քանի մեջբերում.

1.Դու քո ջրամանից ջուր խմիր: Առակաց 5:15

2.Թաքուն կերած հացը համով է: Առակաց:9:17

3.Հունձքի ժամանակ քնող տղան ամոթանք է բերում: Առակաց 10:5

4.Գեղեցիկ կինը եթե խոհեմություն չունի, նման է խոզի մռութին դրված ոսկե օղակի: Առակաց 11:22

5.Լավ է մի կտոր հաց խաղաղությամբ Առակաց 17:1

6.Ավելի լավ է հանդիպել մի արջի, որ ձոթոթները կորցրել է, քան մի հիմարի իր հիմարության ժամանակ: Առակաց 17:12

Եթե մենք կարողանանք այս առակների աղբյուրի ջուրը խմեցնել երեխաներին, այնպես որ կոտրվի նրանց հոգեղեն ծարավը, ապա մենք կդաստիարակենք իմաստուն զավակներ, որոնք օրհնություն կդառնան մարդկության, երկրի, ազգի և իրենց ընտանիքների համար: Նրանք կդառնան այն աղը, որը համ է տալիս երկրին ու մարդկությանը:Պետք է ուղղակի անտարբեր չլինել և տարբեր մեթոդներ մշակել, տարբեր ծրագրեր իրականացնել առակուսուցումը արդյունավետ ուղղությամբ տանելու համար: Ասում են, երեխան նման է ողորկ մակերեսին ընկած ջրի կաթիլի, կգնա այնտեղ,ուր որ մատով կուղղորդես դու: /Սուրբ Երանելի Հերոնիմոս/:

Մաս 2 - Նոր կտակարանյան առակներ

Նոր կտակարանի առակները սակայն ավելի սյուժետային են և կապված են ավելի շատ ոչ թե կենցաղի, մարդկային տարբեր բնույթի հարաբերությունների շտկման և ժողովրդական հարցերի լուծման հետ, այլ քրիստոնեական սիրո, մարդու փրկության և երկնային հարստությունների ձեռքբերման հետ:Այդ առակներից շատերը Հիսուսի առակներն են, ուր Նա որպես բարի Հովիվ, բարի Վարդապետ պատմում էր ու հոգ տանում Իր հոտին: Ամեն մի երևույթի հետ կապված Նա մի նոր ու

խորհրդանշական առակ էր պատմում,որոնցից ամեն մեկը հատուկ հաղորդագրություն է մարդկությանը: Մեծերի համար միշտ էլ շատ կարևոր է իրենց որդիների բարոյական կերպարն ու ապագան,բայց այդ ամենն իրենց ձեռքերում է, նրանք պիտի չզլանան խնամել իրենց երեխաների ոչ միայն մարմինը, այլև՝ միտքը և հոգին:

Անդրադառնալով աստվածաշնչյան առակներին՝ ասեմ, որ իրենց բովանդակությամբ տարբերվում են աշխարհիկ առակներից:

Առակների ուսուցման համար չի կարելի առանձնացնել այս կամ այն առակը, քանի որ աստվածաշնչյան ամեն առակ պետք է նուրբ համադրությամբ հրամցվի երեխաներին, դրանցից ամեն մեկը մի ասելիք ունի և ունի հատուկ նպատակ, սակայն կարելի է առանձնացնել ավելի սիրելի առակների մի շարք, որոնց հանդեպ երեխաներ զգայուն են, օրինակ ծնողասիրության, երդբայրասիրության,ողորմության վերաբերվող առակներ:

Աստվածաշնչից ամենահայտնի առակը «Անառակ որդու վերադարձը» առակն է, որը թեև ամեն ոք կարող է շատ պարզ հասկանալ,բայց այն ունի շատ խորունկ իմաստ և բավականին բարդ հոգեվիճակ է ներառում իր մեջ: Ստեփանոս Սյունեցին շատ տպավորիչ ձևով տալիս է ամեն մի մտքի մեկնությունը և նրան կարդալուց հետո միայն,մենք կարող ենք ամբողջական պատկերացում կազմել առակի բովանդակության ու խրատի մասին:

Աստվածաշնչի Ղկ 15.11-32 հատվածում է պատմվում այդ առակը:Առակն այն մասին է, որ կրտսեր որդին հորից վերցնում է իր բաժին ժառանգությունը, այն ծախսում ցոփ ու շվայտ կյանքի մեջ, ապա հետ վերադառնում խոզարածի տեսքով ու ներում հայցում, որն էլ ստանում է: Ըստ Ստեփանոս Սյունեցու հայրն ավելի կարևորում է կրտսերին, քան ավագ որդուն, քանի որ իր կորցրածը գտավ: Այժմ հետևենք նրա մեկնություններին[10]. Նա կրտսեր որդուն համեմատում է մեղավոր մարդու հետ,ով առաքինությունից բաժանվեց և դրանով համարվեց փոքր, իսկ ավագին՝ անմեղ մարդու կամ հրեշտակների հետ, քանի որ ասում է. «Դու միշտ ինձ հետ ես»: Կրտսեր որդու չքավորությունը նա համարում է Աստծո խոսքի պակասը,որի պատճառով գնացել էր խոզեր արածեցնելու սատանայի ազարակում, ուր ոտքի տակ տրորում ու անարգում են աստվածային մարգարիտները: Խոզերը նա համրում է մարմնական ցանկությունները, որ արածելով թավալվում են մարդկային ախտի ու ժանտահարության մեջ, սերմանում են մարմինը, ոչ թե՝ հոգին: Հետո մեղանչելով վեր է կենում և գնում իր հոր տունը:Երբ նա հեռվից գալիս էր, հայրը տեսավ նրան և գթաց, ընդառաջ գնալով՝ ընկավ նրա պարանոցով և համբուրեց նրան:[4] Առակի հիմնական նպատակն այն է, որ Աստված որպես բարեգութ Հայր միշտ սպասում է մեղավորների վերադարձին և մինչ նրանք հեռվից կաղալով գալիս են, Նա արդեն ընդառաջ է գնում, որպեսզի օգնի նրանց հանապարհն անցնելուն և տուն հասնելուն: Այս առակի մեջ կա նաև երբայրասիրության թեման, չէ՞ որ ավագ եղբայրը նեղսրտեց,որ հայրը ուրախության համար հաց պատրաստեց: Արդյոք այս եղբոր կերպարը դուր կգա՞ր երեխաներին, ո՞վ ինչպես կվարվի այդ եղբոր փոխարեն, սրանք հարցեր են, որ պետք է անպայման տալ երեխաներին:Վստահաբար նրանցից շատերը կհամաձայնվեն ավագ եղբոր որոշման հետ, բայց պետք է այնպես հմտորեն ու մանկավարժորեն ճկել նրանց մոտեցումը և դնել նրանց մեջ եղբորը ներելու բարձր զգացումը, որ դա իրենք էլ չնկատեն:

Այս առակը կարող է տպավորվել յուրաքանչյուր երեխայի մեջ, որովհետև այն ծնողի խոսուն սերն է, անսպառ գորովն ու ջերմ համբույրները:Ամեն մի առակի մեջ կարելի է ընտրել դրական կերպարները և քննարկել դրանք ու նրանց արարքները, որպեսզի երեխաները կարողանան իրենց մտքերն ուղղել այդ կերպարների վրա:

Աստծո սիրո արտահայտման ամենա սքանչելի առակներից մեկը «Կորած ոչխարի» պատմությունն է, երբ Տերը մեղավոր մարդուն համեմատում է կորած ոչխարի հետ. <<Ենթադրենք, որ ձեզնից մեկը հարյուր ոչխար ունի: Երբ նրանցից մեկը կորցնի, ինչուինչինին արոտավայրում չի՞ թողնի և չի՞ գնա կորածի հետևից, մինչև որ գտնի այն: Եվ երբ գտնի, ուրախությամբ իր ուսերի վրա կդնի և կվերադառնա տուն, կկանչի իր բարեկամներին ու հարևաններին և կասի նրանց. «Ուրախացե՛ք ինձ հետ, որովհետև գտա իմ կորած ոչխարը»: <<Ասում եմ ձեզ, որ այդպես էլ երկնքում ուրախություն պիտի լինի մեկ ապաշխարող մեղավորի համար, քան ինչուինինը արդարների համար, որոնք ապաշխարության պետք չունեն>>:[12]

Հիսուս պատմում է անսահման ուրախության մասին, երբ նա գտնում է Իր համար ամենաթանկ բանը՝ մարդու կորած հոգին: Նա ասում է, որ ամեն ինչ կթողնի և կգնա Իր կորած ոչխարին գտնելու համար, անգամ եթե մեղավոր է մարդը ու անհավատարիմ, Նա միևնույն է Իր փարախի մեջ է առնում նրան: Այս առակի միջոցով մենք կարող ենք երեխաների մեջ ամրագրելով Աստծո անսպառ սերը՝ նրանց զերծ պահել աղանդավորական այն հերձվածություններից, որոնք տարածում են

[411]Ղուկաս ԺԵ 20
[12]Մատթեոս 18:12-14

այդ կազմակերպությունները՝ ասելով,թե հայ եկեղեցին միայն Աստծո պատժի մասին է խոսում, քարոզում է միայն «Չի կարելի»-ներ և ահ ու սարսափի մեջ է պահում իր հավատացյալներին՝ նրանց դարձնելով Աստծուց վախեցողներ ու դատապարտվածներ, սակայն այդպես չէ, հայ եկեղեցին Քրիստոսի սիրո ջահակիրն է և նրա վարդապետության մեջ ամենաամուր սեպը Տիրոջ սերն է առ մարդ և մեղավորի հանդեպ Նրա անսպառ սպասումն ու գորովանքը: Իր մոտ եկողին Նա երբեք դուրս չի թողնի, Իր կորցրած ոչխարին Նա չի դադարի փնտրել, մինչև որ նրա համար ուրախության մեծ սեղան չբացի: Շատ կարևոր բան է երեխաներին սիրո և հերման մասին առակներ պատմել, որովհետև երկնային թագավորության մեջ դրանք են իշխում:

Նրանց պետք է սովորեցնել սիրել ոչ միայն ծնողներին և միմյանց, այլ նաև բնությունը, կենդանիներին և ամենակարևորը՝ հայրենիքը: Թեև հայրենասիրության մասին առանձին առակ չկա նոր կտակարանում, բայց կարելի է շատ նուրբ թելերով այդ առակները կապել նաև հայրենիք սիրելու գաղափարին, որովհետև այն երեխան, ով երկրի վաղվա տերն է, եթե չսիրի իր հայրենիքը նա կվերածվի վաճառականի և սամարացի ամուսինների նման որպես պարտականություն իր ունեցած գումարի մի մասը կհատկացնի առաքյալներին՝ այս պարագայում երկրին, իսկ մի մասը կթաքցնի իր անձնական կարիքների համար, որի արդյունքում նրանք երկուսն էլ մահանում են, որովհետև խաբեցին և ագահացան:

Այդ առումով ես մի առակ կվերցնեմ ՝այն կապելով հայրենասիրության գաղափարի հետ: Դա «Չար մշակների առակն է»:

<<Այս առակն էլ լսեցե՛ք: Կալվածատեր մի մարդ կար, որ մի այգի տնկեց, չորս կողմից ցանկապատեց այն, հնձանի համար փոս փորեց և աշտարակ շինեց, ապա այն վարձու տվեց մշակների, իսկ ինքը մեկնեց ուրիշ երկիր: Երբ այգեկութի ժամանակը հասավ, իր ծառաներին ուղարկեց մշակների մոտ՝ բերքից իր բաժինն առնելու: Մշակները, նրա ծառաներին բռնելով, մեկին ծեծեցին, մեկին սպանեցին, իսկ մյուսին էլ քարկոծեցին: Այգու տերը դարձյալ ծառաներ ուղարկեց՝ թվով ավելի, քան նախկիններները, բայց սրանց էլ նույն բանն արեցին: Վերջում իր որդուն ուղարկեց նրանց մոտ՝ մտածելով. «Թերևս իմ որդուց քաշվեն»: Բայց մշակները, երբ տեսան որդուն, իրենց մտքում ասացին. «Սա է ժառանգը, եկեք սպանենք սրան, որպեսզի տիրանանք նրա ժառանգությանը»:Եվ բռնելով նրան՝ այգուց դուրս հանեցին ու սպանեցին: Ապա Հիսուսը հարցրեց. - Արդ, երբ այգու տերը գա, ի՞նչ կանի այդ մշակներին: Նրանք պատասխանեցին. - Այդ չար մշակներին անկասկած կսպանի և այգին վարձու կտա ուրիշ մշակների, որոնք նրա բերքի բաժինը նրան կտան իր ժամանակին>>:

Մտ 21.33-41

Աստված մեզ տվել է մեր հայրենիքը, որպեսզի ամեն մեկս մեզ տրվածի չափով այն մշակենք, խնամենք և շենացնենք, ոչ թե վարձով տանք ուրիշին կամ սպանելով նրա հավատարիմ մշակներին ու որդուն,փորձենք ոչ թե ծառայել, այլ պատառ- պատառ անել և փչացնել արարչագործության ներդաշնակ ծաղկումը:Ամեն մեկս պետք է ձգտենք ծառայել հայրենիքին, հավատարիմ մնալ նրան, այն հողին, որ Աստված տվել է մեզ, այլապես այդ հողը կմաղվի մեր գլխին և կդառնա մեր գերեզմանը:Մեր անտարբերությունն ու փախստականի վերաբերմունքը կարող է զրկել մեզ Աստծո պարգևից՝ հայրենիքից,եթե մենք նրան չվերաբերվենք բարի մշակների պես, նրա ամեն մի մասնիկը մերը չհամարենք ու չծաղկեցնենք այն: Ամեն երեխայի մեջ պետք է ներշնչել, որ նրանից շատ բան է կախված,որովհետև իրեն է վստահված այն ագարակը, որ հայրենիքն է:

Կապված երեխաների զգացական, տարիքային առանձնահատկություններից պետք է կենտրոնանալ այնպիսի առակների վրա, որոնց միջոցով կկարողանանք նրանց ներշնչել լուսավորն ու բարին: Հիսուսը Իրեն ու նաև հավատացյալ մարդուն համեմատում է նրագի հետ՝ ասելով, որ լույսը պահել չի լինում:(«Ճրագի առակն է») «Մի՞թե որևէ մարդ ճրագը ներս կբերի կաթսայի կամ անկողնու տակ դնելու համար: Աշտանակի վրա չի՞ դնի այն. որովհետև չկա ծածուկ բան, որ չհայտնվի, ոչ էլ գաղտնի բան, որ երևան չգա»:[13]

Երեխաներն իրենք աստվածային լույսի աշտանակներ են, հնարավոր չէ նրանց անմեղությունը պահել կամ խավարել նրանց լուսավոր էությունը: Նրանց պետք է շատ կարևորել, որպեսզի նրանք հասկանան, որ իրենք սովորական հոգի չեն կրում իրենց մեջ, այլ արժեքավոր ու շատ թանկարժեք մի էություն,որն ունեն ադամատն ու հարուստը, տկարն ու ուժեղը, հաշմանդամն ու հաղթանդամը, գեղեցիկն ու տգեղը, բոլորի մեջ Աստված Իր լույսն է դրել, ուստի այդ ճրագը միշտ պետք է վառ պահել: Նրանք այս առակի միջոցով կհասկանան, որ պետք չէ արհամարհել կամ ծաղրել այն ընկերոջը, ով գեղեցիկ չէ կամ թանկարժեք հագուստ չի հագնվում, որ պետք չէ նեղացնել արատավոր մարդկանց ու նրանց թերարժեք համարել, նրանք թերարժեք չեն, քանի որ իրենց մեջ կրում են այդ ճրագը՝Աստծո հոգին:

Որպեսզի նրանք իրենց մեջ կարողանան միշտ պահել աստվածային այդ լույսը և աշխարհի մեջ լինել բարու կամքը, ապա նրանց պետք է սովորեցնել չհեռանալ Քրիստոսից՝լույսի աղբյուրից: Նրանց տները պետք է ամրացնել ու պարիսպներ պատրաստելու կարողություն տալ՝ հավատքի մեծ գերուժը: Հիսուսն Ինքն է ասում, որ տունը պետք է կառուցել ժայռի վրա:

<<Ով որ ինձ մոտ է գալիս և իմ խոսքերը լսելով՝ գործադրում է դրանք, ձեզ ասեմ, թե նա ում է նման: Նման է այն մարդուն, որ տուն կառուցելու համար հողը խորն է փորում և հիմքը հաստատում ժայռի վրա: Երբ գետը, հեղեղներից հորդելով, զարկի այդ տանը, չի կարողանա խախտել այն. որովհետև տան հիմքը ժայռի վրա է հաստատված: Իսկ ով լսում է իմ խոսքերը, բայց չի գործադրում դրանք, նման է այն մարդուն, որ հողի վրա առանց հիմքի տուն է կառուցում. երբ գետը զարկում է դրան, այն իսկույն քանդվում է: Եվ ի՜նչ ահավոր է լինում այդ տան կործանումը>>:

Ղկ 6.47-49

Ժայռը Ինքն է՝ Հիսուս Քրիստոսը, իսկ ավազը՝ այս աշխարհը: Եթե քո կյանքը կառուցում ես այս աշխարհի (հատկապես այսօրվա՝ գլոբալիստական աշխարհի) վրա, ինչպես որ կառուցես՝ վաղ թե ուշ քնադվելու է: Մենք պետք է իմաստուն լինենք և մեր կյանքը կառուցենք Հիսուս Քրիստոսի ՝ ժայռի վրա, այսինքն ապրենք Նրա խոսքի համաձայն և այդժամ ոչ մի չարիք, նեղություն և դժվարություն չեն կարող մեզ կործանել:

Նմանատիպ շատ առակներ կարելի է մանրամասնել ու դետալներով քննարկել երեխաների հետ, նրանց տալ միայն բարին արարելու ձգտումը: Մնացած ճանապարհները նրանք արդեն կկարողանան ինքնուրույն հաղթահարել:

Քրիստոս Իր առակներով միշտ բարին է ուսուցանում, աստվածային արարչագործության հիմքը բարի կամքն է, այլ ոչ թե մարդկությանը փորձություններին ու տառապանքի ենթարկելը, ինչպես կարծում են այլադավան հերձվածությունները: Հենց Ծննդոց գրքից Տերը խոսում է բարու մասին. «Եվ Աստված տեսավ, որ բարի է ...». Ծննդոց 1:10: Այսպես սկսվում է Աստվածաշունչը և ամբողջ արարման ողջ ընթացքը: Ուստի մեր երեխաներին պետք է հաղորդենք բարուն, որպեսզի բարի սրտով և ողորմության գործերով նրանք երկնքում գանձեր դիզեն և պտուղներ տան հազարապատիկ:

«Բարի ծառը չի կարող չար պտուղ տալ, ոչ էլ չար ծառը՝ բարի պտուղ: Ամեն ծառ, որ բարի պտուղ չի տալիս, կտրվում է և կրակը նետվում»: Մատթ. 7:19

Ողորմությունն ու ներումը Աստծո արքայության դռնապաններն են, նրանք են բացելու այդ դռները: Զգլանանք ու այդ դռնապաներին ծանոթացնենք մեր մանուկներին՝ բազմաթիվ առակների օրինակներ բացահայտելով նրանց համար:

«Որդի՛ս, լսի՛ր իմ խոսքերը, և ականջ դիր Իմ ասածներին: Դրանք թող չհեռանան քո աչքերի առջևից, դրանք քո սրտում պահիր»: Առակաց 4:20-21

---

[13]Մր 4.21-22 , [14]Ղկ 6.47-49

Ամեն մի ժամանակաշրջան ունի իրեն հատուկ դժվարությունները, սակայն դրանք հաղթահարելու համար պետք է նորովի մեթոդներ մշակել և դաստիարակել բարոյական բարձր արժեքային համակարգ ունեցող հասարակություն:Երեխայի մոտ պետք է չեզոքացնել բնավորության վատ գծերն ու թերությունները, ընդլայնել նրա աշխարհայացքը, տալ գիտելիքներ կրթության և կյանքի մասին: Առակների ուսուցողական արժեքն անվիճելի է, քանզի առակի միջոցով ավելի մատչելի և պատկերավոր կարող ենք իրականացնել երեխայի դաստիարակությունը:

Առակների միջոցով կարող ենք դաստիարակել բարոյական բարձր արժեքային համակարգ ունեցող սերունդ,ինչպես նաև զարգացնել աշակերտների ընթերցասիրությունը, կարդալու, վերլուծելու որակական հատկանիշները:

Միանգամայն ճիշտ է այն կարծիքը, որ Աստվածաշնչյան առակների դաստիարակող բնույթը, դերն ու նշանակությունը շատ մեծ է քրիստոնյա մարդու կայացման համար,այն հավատքի հիմքն է, Աստծուն ճանաչելու միջոցներից մեկը: Ահա, թե ինչու նոր սերնդին ևս պետք է առաջնորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ նմուշներով, որոնք դեռ դարեր կպահպանեն իրենց արդիականությունն ու դիպուկությունը, մտքի ճկունությունը:Այսօր մեզ համար ավելի բարդ է հոգևոր մարդ դաստիարակելը, քանի որ գտնվում ենք տեխնոլոգիական նոր ժամանակների մարտահրավերների առջև և հակամարտում ենք սատանայի նոր և օրըստօրե զարգացող խաղալիքների հետ, որոնք հրապուրում, միանգամից իրենց անձնատուր են անում ու շշմեցնում երեխաներին: Պոետի ասած «Հոգու սովը» տիրում է բոլորին և համատարած ծավալվում՝ վարակելով անգամ նոր աշխարհ ճանաչող երեխաներին: Ինտերնետի թափոնները օրեկան հարյուրավոր գեգաբայթերով գրոհում են երեխաների ուղեղների վրա և արմատներ ձգում այնտեղ: Այս հեղեղի դեմ կանգնել սոսկ խոսքերով անհնար է, որովհետև երեխաներն ի զորու չեն անգամ լսելու մեր խոսքերը: Պետք է ուղղակի նույն համացանցային միջոցները փորձել ծառայեցնել բարի նպատակների համար և ամենակարևորը՝ նրանց անձնական օրինակ տալ:

«Մենք պետք է ոչ թե մեր երեխային պատմենք հավատի մասին, այլ դրա կենդանի մարմնավորումը լինենք: Զէ° որ ուզած քարոզ անպտուղ է և անիմաստ, եթե խարսխված չէ ծնողի անձնական օրինակի և նրա անսասան հեղինակության վրա»:[15]

Աստվածաշնչյան առակների դաստիարակող էությունը, դերն ու նշանակությունը եղել և մնում են ողջ քրիստոնյաների հավատքի հիմքը: Աստվածաշնչյան արժեհայեցողությունը միշտ կենսունակ է և առաջնային ցանկացած ժամանակաշրջանի համար, հատկապես՝ այսօր:

«Պետք է խոսքը ոչ միայն լսող լինենք, այլ նաև կատարող»: Առակաց

---

[15]Կ.Տեր-Գրիգորյան<<Հայրեր, մայրեր,որդիներ>>

Առաջարկություն

Քանի որ հանրակրթական դպրոցներում ՀԵՊ առարկայի դասավանդումը դադարեցվել է, ուստի անհրաժեշտ եմ գտնում տարրական և հիմնական դպրոցում մայրենիի ընթերցանությունում ընդգրկել աստվածաշնչյան շատ առակներ:

Օգտագործված գրականության ցանկ

1.Աստվածաշունչ

2.Սիփան Բեն Գրիգորյան «Նոր կտակարանի ներածություն»:

3.Ստեփանոս Սյունեցի «Զորս ավետարանների համառոտ մեկնություն»:

4.Կարինե Տեր – Գրիգորյան «Հայրեր, մայրեր, որդիներ»:

5. Հովհան Ոսկեբերան «Ընտիր ճառեր»: